Միսաք Մեծարենց

Աշնանային հեծություններ

Իրիկուններն ես կը խոկամ,
ամայության երգը կ’ացնի
պատուհանիս երբ առջևեն,
անկապ ձայներ զիս կը թովեն,
հոգվույս մեջեն մերթ Աշունի
կ’անցնի հանկարծ ուրուն տարտամ:

Գիշերն համբուն ես կ’երազեմ
ցավը կյանքի Աշուններուն,
ու շամբուշ հովն՝ որ կը տանի
դեպի տամուկ խորշեր նըսեմ՝
զոս տերևի տեսիլն աղվուն,
որ օդին մեջ կը տատանի:

Եվ ցուրտ այգուն միշտ կը դիտեմ
պարուտակը մըշուշներուն,
զոր գիշերվան անտես ձեռքեր
թույլ միջոցին մեջ են ձըգեր,
վըհատության պես մոլորուն՝
զոր քաշած է սերն հոգվույն դեմ:

Բայց թափառի՛լ կուզիմ ընդմիշտ,
մառախուղին ու հովին դեմ,

ու դաշտերուն մեջ ամայի,
ուր աչքն ահով միշտ կը նայի,
դիտել՝ տժգույն ու դալկադեմ
բարձունքներուն տամուկն ու վիշտ:

Հոգիս հիմակ հափրանքն ունի
սիրո խանդ ու հրայրքներուն,
ու ծաղկալից եղկ ջերմության
վայելքեն վերջ բազմաբուրյան,
կ'ուզե մշուշն այս օրորուն,
ու ցրտագին զովքն Աշունի: